Ալեքսանդր Շիրվանզադե

Քաղաքային դումայի դահլիճում

«Եվ ժողովեալ զմաքսաւորս

և զփարիսեցիս դատ արարին»:

Ապրիլի տասնմեկն էր, առավոտյան տասնմեկ ժամը: Դատարանի տեղը քաղաքային դումայի դահլիճն էր: Դատարանում նախագահում էր Պիղատոսի փոխանորդ Պլատոնը, դատի էր ենթարկվում ոչ-նազովրեցի Նազարեթը: Իսկական հեթանոսը, որ դյութական զորությամբ միևնույն կտրոններով երկու անգամ փող էր ստացել քաղաքային բանկից, բացակա էր: նախագահի աջ կողմում նստած էր մեծն Նապոլեոնը: Նրա առջև դրված էր Սեղանի... Ներողություն... ծակված կտրոնների հարցը: Դահլիճը լիքն էր, կային քաղաքի «Նշանավոր գերդաստաններից» շատերը: Նապոլեոնի զինվորներից երկուսին ներս բերեցին պատգարակների (НОСИЛКИ) վրա, վասնզի շատ ճակատամարտերում վերքեր ստացած լինելով, այժմ նրանք անդամալույծ էին: Մի ուրիշ հինավուրց զինվորի ձեռից բռնած ներս բերեցին, վասնզի կույր էր աչոք:

Տեսարանը փառահեղ էր:

Սկսվեց պատերազմը: Հաջն Տիգրանի թոռը՝ ազնիվ Նազարեթը տվեց առաջին հարվածը: Մեծն Նապոլեոնը կուլ տվեց մի քանի դառն կազդուրիչ «պիլուլներ»: Նա վճռել էր քաջությամբ կռվել: Նա մի այնպիսի «հիանալի սառնասրտությամբ» էր լսում դառն ճշմարտության ձայնը, որ նրա սպարապետներից մեկը սքանչացած նայում էր «բեղերը սրելով» և հիշելով իր անցյալ սխրագործությունները: Եվ՝ հանճարեղ ռազմագետի հզոր ձայնին

հնազանդվելով՝ զորագունդը միահամուռ արձակեց քառասունևհինգ գնդակներ և օ՛ն, առաջ, հաղթական բլրի գագաթը հանեց Մեծն Նապոլեոնին:Եվ ամեն մեկը սողալով վեր էր բարձրանում այդ բլուրը, համբուրել մեծ մարդու ոտները, իսկ նա՝ հպարտությամբ շոյում էր իր ստամոքսը:

«Դավաճանությո՛ւն, դավաճանություն», լսելի եղավ ներքևից: Ռազմագետի մեծ մարշալը՝ Մարկիանոսը, խույս էր տրվել աշխարհակալից և միացել նազարեթի հետ: նապոլեոնի պատերազմական հնարքներին քաջ ծանոթ՝ նա քաջությամբ պարզեց այդ գաղտնիքները. օ՛հ, սոսկալի դավադրություն: «Ձե՛նքի, զե՛նքի», որոտաց բլրից ահեղագոչ ձայնը: Եվ անդամալույծները դյութական ուժ առան ու արձակեցին նորից գնդակներ, քսանվեց թնդանոթային գնդակներ: Դյուրաթեք կնճիթանոց և կարճապոչ փողերը շուռ եկան Նազարեթի զորքի վրա և իրանց ծանր ոտների տակ տրորեցին նրան:

Եվ մեծն Նապոլեոնը կրկին կանգնած էր բլրի վրա հաղթական ժպիտով և ամեն մեկը, սողալով, նորից վեր էր բարձրանում նրա ոտները համբուրելու համար:

Ա՛խ Նազարեթ, Նազարեթ, մի՞թե դու չգիտես ինչի համար խաշեցին նազովրեցուն: Եթե նա դաշտերում և լեռների վրա չքարոզեր բարձրաձայն ճշմարտությունը, մի՞թե մաքսավորներ նենգավորները և փարիսեցիները կասեին. «Ի խաչ հա՛ն, ի խաչ հան զդա»…

Գոնե պետք է օրինակ առնեիր բանկի այցելուներից և անդամներից: Դրանք գրավ դրին բոլոր ունեցածը. դու էլ գրավ կդնեի՛ր այն, ինչ որ ունեիր ձայնդ, «Սառնարյուն» մարդկանց խորհրդին չլսեցի՞ր, դեհ, գնա՛ դատափետվիր:

Հ. Գ.: Երկուշաբթի, ապրիլի 12-ին, Զգրաշենի եկեղեցում հոգաբարձական ընտրություններին իշխան Նապոլեոն Ամատունին ստացավ մեկ ձայն: Լսում եմ, խիստ խուզարկություն է սկսվել այդ ձայնը գտնելու: